

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____ 2020 թիվ ____-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 1937-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը գույք փոխանցելու և գույքի նվիրատվության մասին» N 1937-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Հայաստանի Հանրապետությանը՝ «Հրաժարում՝ հոգուտ պետության» մաքսային ընթացակարգով հանձնված՝ 2,253,841 ՀՀ դրամ մաքսային արժեքով մարզաշապիկները, 431,656 ՀՀ դրամ մաքսային արժեքով սպորտային կոմբինեզոնները, 246,207 ՀՀ դրամ մաքսային արժեքով պլաստմասե պաշտպանիչ սաղավարտները, 244,695 ՀՀ դրամ մաքսային արժեքով մարզակոշիկները, 110,088 ՀՀ դրամ մաքսային արժեքով պլաստմասե ջրի շշերը, 346,922 ՀՀ դրամ մաքսային արժեքով հեծանիվի ղեկերը, 851,686 ՀՀ դրամ մաքսային արժեքով հեծանիվի նստատեղի ստորին ձողերը (օգտագործված), 2,339,810 ՀՀ դրամ մաքսային արժեքով բռնակներ և բռնակների հավաքածուները հեծանիվի համար, 98,628 ՀՀ դրամ մաքսային արժեքով հեծանիվի նստոցները, 114,785 ՀՀ դրամ մաքսային արժեքով տրենաժոր-հեծանիվը (օգտագործված), 124,873 ՀՀ դրամ մաքսային արժեքով հեծանվորդի ուսապարկը, 205,697 ՀՀ դրամ մաքսային արժեքով հեծանիվի անվահեծերը (օգտագործված), 60,479 ՀՀ դրամ մաքսային արժեքով երկանիվ հեծանիվը TREK 20 (օգտագործված), 90,264 ՀՀ դրամ մաքսային արժեքով երկանիվ հեծանիվը MONGOOSE 26

(օգտագործված), 87,904 ՀՀ դրամ մաքսային արժեքով երկանիվ հեծանիվը SPECIALIZED HERSHEY (օգտագործված), 113,187 ՀՀ դրամ մաքսային արժեքով երկանիվ հեծանիվը MONGOOSE 24 , 359,508 ՀՀ դրամ մաքսային արժեքով FIRESTONE օդաճն. դողերը ռետինե նոր մարդատար ավտոմեքենայի, 105,052 ՀՀ դրամ մաքսային արժեքով երկանիվ հեծանիվները GIANT XTC24 (օգտագործված), 112,289 ՀՀ դրամ մաքսային արժեքով հեծանիվը MONGUSE STANDOFF (օգտագործված), 145,155 ՀՀ դրամ մաքսային արժեքով հեծանիվը TRAINER (օգտագործված), 1,238,203 ՀՀ դրամ մաքսային արժեքով հեծանիվը VITUS (օգտագործված), 112,513 ՀՀ դրամ մաքսային արժեքով հեծանիվը DIAMONDBACK WILDEWOOD (օգտագործված), 109,156 ՀՀ դրամ մաքսային արժեքով հեծանիվը MIYATA (օգտագործված), 108,409 ՀՀ դրամ մաքսային արժեքով հեծանիվը CANONDALE ASAULT (օգտագործված), 224,765 ՀՀ դրամ մաքսային արժեքով անիվներով ճամպուուկը, 229,801 ՀՀ դրամ մաքսային արժեքով մեքենայի վրա դրվող կրիչ՝ հեծանիվների համար (օգտագործված), 231,070 ՀՀ դրամ մաքսային արժեքով բարձրացնող էլ. սարքը CHAMPION՝ հեծանիվների համար, 1,035,708 ՀՀ դրամ մաքսային արժեքով հեծանվորդի սաղավարտները (օգտագործված), 2,524,374 ՀՀ դրամ մաքսային արժեքով հեծանվորդի շորտերը, 1,914,672 ՀՀ դրամ մաքսային արժեքով տղամարդու կոմբինիզոնը, 130,541 ՀՀ դրամ մաքսային արժեքով հեծանվորդի շապիկները, 79,549 ՀՀ դրամ մաքսային արժեքով սպորտային բաճկոնները, 6,626,121 ՀՀ դրամ մաքսային արժեքով հեծանվորդի վերնաշապիկները, 185,318 ՀՀ դրամ մաքսային արժեքով հեծանվորդի գուլպաները (օգտագործված), 1,307,762 ՀՀ դրամ մաքսային արժեքով հեծանվորդի կոշիկները (օգտագործված), 2,062,518 ՀՀ դրամ մաքսային արժեքով տաք ձեռնոցները, 102,402 ՀՀ դրամ մաքսային արժեքով հեծանիվը KAWASAKI (օգտագործված), 93,243 ՀՀ դրամ մաքսային արժեքով հեծանիվը SCHWIN (օգտագործված) (այսուհետ՝ Գույք), փոխանցել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը:».

2) որոշման մեջ 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում «5 օրվա» բառերը փոխարինել «10 օրվա» բառերով:

Հայաստանի Հանրապետության

վարչապետ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը գույք փոխանցելու և գույքի նվիրատվության մասին» N 1937-Ա որոշման /այսուհետ՝ որոշում/ 2-րդ կետի հանձնարարականի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը ս.թ. դեկտեմբերի 4-ի հ. 01/20.1/30247-2020 գրությամբ դիմել է ՀՀ պետական եկամուտների կոմիտե /այսուհետ՝ կոմիտե/ նույն որոշման 1-ին կետում նշված Հայաստանի Հանրապետությանը՝ «Հրաժարում՝ հոգուտ պետության» մաքսային ընթացակարգով հանձնված գույքը՝ սահմանված կարգով փոխանցել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը /այսուհետ նախարարություն/:

Սակայն կոմիտեն ս.թ. դեկտեմբերի 10-ի հ. 01/18-4/77616-2020 գրությամբ հայտնել է, որ որոշման 1-ին կետում տեղի է ունեցել վրիպակներ, վերջինիս մեջ նշված ապրանքների արժեքների և «Հրաժարում՝ հոգուտ պետության» ընթացակարգով ձևակերպված թիվ 05100010/280720/0044260, թիվ 05100010/280720/0044255, թիվ 05100010/280720/0044256, թիվ 05100010/280720/0044258 հայտարարագրերում նշված ապրանքների մաքսային արժեքների մեջ առկա է անհամապատասխանություն, ինչը ներկայումս խոչընդոտում է կոմիտեի կողմից որոշման 1-ին կետում նշված գույքը նախարարությանը փոխանցելու գործընթացին:

Սույն որոշման ընդունմամբ կկարգավորվի Հայաստանի Հանրապետությանը՝ «Հրաժարում՝ հոգուտ պետության» մաքսային ընթացակարգով հանձնված գույքը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը փոխանցելուն գործընթացը:

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 1937-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ
ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱՋԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1937-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի սպասվում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 1937-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

N/ N	Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություն
1.	<p>ՀՀ արդարադատության նախարարություն</p> <p align="center">2020-12-18</p> <p align="center">01//28467-2020</p>	<p>Առաջարկում է</p> <p align="center">1. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1937-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերնագրում «2020 Թ.» բառերն անհրաժեշտ է փոխարինել «2020 ԹՎԱԿԱՆԻ» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին»</p>	<p align="center">1. Ընդունվել է</p>	<p align="center">1. Որոշման նախագծի վերնագրում առաջարկին համապատասխան կատարվել է փոփոխություն</p>

		<p>օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը, որի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում փարեթիվը և ամսաթիվը գրվում են թվերով, իսկ ամիսը՝ փառերով: «Թվական» բառը և դրա հոլովածները գրվում են ամբողջությամբ:</p> <p>2. Նախագծի նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածին:</p> <p>3. Նախագծի 1-ին կետում «դեկտեմբերի» բառից առաջ անհրաժեշտ է լրացնել «թվականի» բառը:</p> <p>4. Նախագծի 1-ին կետի 2-րդ ենթակետում «5-րդ» բառն անհրաժեշտ է փոխարինել «4-րդ» բառով, քանի որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1937-Ա որոշման մեջ 5-րդ կետ</p>	<p>2.Ընդունվել է</p>	<p>2. Որոշման նախագծի նախաբանում առաջարկին համապատասխան կատարվել է</p>
--	--	---	----------------------	--

		<p>առկա չէ:</p> <p>5. Նախագծում անհրաժեշտ է պահպանել նորմատիվ իրավական ակտին ներկայացվող վավերապայմանները, մասնավորապես՝ ստորագրող պաշտոնատար անձի (անձանց) պաշտոնը, անվան սկզբնադառը, ազգանունը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի պահանջները:</p>	<p>3.Ընդունվել է</p> <p>4. Ընդունվել է</p>	<p>լրացում</p> <p>3. Որոշման նախագծի 1-ին կետում առաջարկին համապատասխան կատարվել է լրացում</p> <p>4. Որոշման նախագծի 1-ին կետի 2-րդ ենթակետում առաջարկին համապատասխան կատարվել է փոփոխություն</p> <p>5. Որոշման նախագծում առաջարկին համապատասխան կատարվել է լրացում</p>
--	--	--	--	---

			5.Ընդունվել է	
2.	<p>ՀՀ ֆինանսների նախարարություն</p> <p>2020-12-16</p> <p>N 01/8-3/18828-2020</p>	<p>Առարկություններ և առաջարկություններ չկան:</p>		
3.	<p>ՀՀ պետական եկամուտների կոմիտե</p> <p>2020-12-15</p> <p>01/18-4/78826-2020</p>	<p>Առարկություններ և առաջարկություններ չկան:</p>		
4.	<p>ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար</p> <p>2020-12-14</p> <p>02/43/52722-2020</p>	<p>Առարկություններ և առաջարկություններ չկան:</p>		